



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

29 օգոստոսի 2019թ.

N 8 -Ա

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արցախի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին և 140-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը *որոշում է*.

1. Սահմանել Արցախի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների 2019 թվականի սեպտեմբերի 8-ի ընտրությունների հետևյալ քվեաթերթիկների նմուշները (կցվում են).

- 1) համայնքի ղեկավարի ընտրությունների քվեաթերթիկ (228 նմուշ).
- 2) համայնքի ավագանու անդամների ընտրությունների քվեաթերթիկ (228 նմուշ):

2. Սահմանել, որ համայնքի ավագանու անդամների ընտրությունների քվեաթերթիկներն ունեն սպիտակ գույն, իսկ համայնքի ղեկավարի ընտրությունների քվեաթերթիկները վարդագույն են:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ

Ե.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ